ք.Երևան «17» հուլիսի 2026 թ.

Ծանուցում

«ՀԿԵ» ՓԲԸ Արմավիր-Էջմիածին վագքուղու վրա մպաբ-ԴԿ դիսպետչերական հսկողության ենթահամակարգով միկրոպրոցեսորային սարքերի ներդրմամբ օպտիկամանրաթելային կապի գծով Կիսաավտոմատ արգելափակման համակարգի տեխնիկական վերասարքավորման նախագծա-հետազննման աշխատանքների կատարման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու իրավունքիծառայությունների մատուցման պայմանագրի կնքման իրավունքի մասին

Գնանշման հարցում

թիվ ՀԿԵ-ԳՀ 026/085 ծածկագրով

կ/կ	Գնման գործընթացի չափանիշներ	Գնման պայմաններ
1.	**Գնման տարբերակ**	**Գնանշման հարցում թղթային տարբերակով**
2.	Գնման գործընթացի կազմակերպողի անվանումը, գտնվելու վայրը, հասցեն, էլեկտրոնային հասցեն, կոնտակտային հեռախոսահամար	**Կազմակերպող՝** «ՀԿԵ» ՓԲԸ Գնումների կազմակերպման բաժին Գտնվելու վայրը՝ ք.Երևան, Տիգրան Մեծի պող. 50 Փոստային հասցե՝ 0005, ք.Երևան, Տիգրան Մեծի պող. 50 Էլեկտրոնային փոստ՝tender@railway.am Կոնտակտային հեռախոս՝ +374 (60) 46-31-74 **Պավիրատու՝** «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ Գտնվելու վայրը՝ ք.Երևան, Տիգրան Մեծի պող., 50, 0005
3.	Գնման առարկան, մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության ծավալը	ՀԿԵ» ՓԲԸ Արմավիր-Էջմիածին վագքուղու վրա մպաբ-ԴԿ դիսպետչերական հսկողության ենթահամակարգով միկրոպրոցեսորային սարքերի ներդրմամբ օպտիկամանրաթելային կապի գծով Կիսաավտոմատ արգելափակման համակարգի տեխնիկական վերասարքավորման նախագծա-հետազննման աշխատանքների կատարման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու իրավունքիծառայությունների մատուցման պայմանագրի կնքման իրավունքի մասին:
4.	Ապրանքի մատակարարման, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների վայրը և ժամկետները	**Ծառայությունների մատուցման վայրը՝** Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ **Ծառայությունների մատուցման ժամկետը՝** Աշխատանքների կատարման ժամկետը պայմանագրի կնքման օրվանից 90 օրացուցային օր է
5.	Պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գինը (չափաբաժնի գինը) կամ ապրանքի միավորի, աշխատանքի, ծառայության արժեքը	Պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գինը՝ 9 500 000 (ինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի կամ 11 400 000 (տասնմեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ կամ 1 900 000 (մեկ միլիոն ինը հարյուր հազար) ՌԴ ռուբլի առանց ԱԱՀ-ի:

6.	Տեղեկատվություն հայտի ապահովման կիրառման չափի, կարգի և ժամանակի մասին (ներառվում է հաճախորդի / գործառնական հաճախորդի պահանջով «ՀԿԵ» ՓԲԸ)	Հայտի ապահովում չի տրամադրվում:
7.	Գնման փաստաթղթերի ներկայացման վայրը և կարգը	Փաստաթղթերը տեղադրվում են "ՀԿԵ"ՓԲԸ կայքում: Փաստաթղթերը հասանելի են "ՀԿԵ" ՓԲԸ կայքում առանց սահմանափակումների հրապարակման պահից:
8.	Գնմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի սկզբի կարգը, ամսաթիվը և ժամկետը:	Հայտերը ներկայացվում են երկու փակ ծրարներով՝ "Բնօրինակ" և "Պատճեն" հստակ մակնշմամբ: Հայտերի ներկայացման սկիզբ՝ ծանուցման հրապարակման պահից կայքում – 2026թ. հուլիսի «17» (աշխատանքային օրերին՝ 09:00-ից 18:00, ընդմիջում՝ 13:00-ից 14:00 (տեղական ժամանակով)): Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝ 2026թ. օգոստոսի «10», (աշխատանքային օրերին՝ 09:00-ից 18:00, ընդմիջում՝ 13:00-ից 14:00 (տեղական ժամանակով)): Ծրարները՝ մինչև գնումների կազմակերպչին հանձնելը (ք. Երևան, Տիգրան Մեծի պողոտա 50 հասցեով՝ "ՀԿԵ" ՓԲԸ-ի կենտրոնական մուտքը) ենթակա են գրանցման "ՀԿԵ" ՓԲԸ անվտանգության ծառայության:
9.	Գործընթացից հրաժարվելու իրավունքը	ՀԿԵ» ՓԲԸ-ն իրավունք ունի չեղյալ համարել մրցակցային գնումը գնման մեկ և ավելի առարկայի (լոտի) մասով մինչև մրցակցային գնմանը մասնակցության հայտերի ներկայացման ամսաթիվը և ժամկետի ավարտի ժամը և հավակնորդներին մասնակցությանը թույլատրելու վերաբերյալ որոշումն ընդունելը, չկրելով ոչ մի պատասխանատվություն ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց առջև, որոնց այդպիսի գործողությունը կարող է վնասներ պատճառել, ինչպես նաև փոփոխել գնման գործընթացի անցկացման վերաբերյալ ծանուցումը հայտերի ներկայացման վերջնաժամկետից 1 օր առաջ:
10.	Տեղեկատվություն՝ մրցակցային գնումների փաստաթղթերում նշված պահանջներին չբավարարելու մասին	ՀԿԵ» ՓԲԸ-ն կարող է մերժել գնանշումների հայտերը հետևյալ դեպքերում. 1) գնանշման հայտը չի համապատասխանում գնանշումների հարցման մեջ նշված պահանջներին; 2) պայմանագրի գնի (չափաբաժնի գնի) և/կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի

		գնի վերաբերյալ գնանշման հայտում առաջարկությունը գերազանցում է պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը (չափաբաժնի գինը) և/կամ ապրանքի, աշխատանքի, ծառայության միավորի սկզբնական (առավելագույն) գինը (եթե այդպիսի գին սահմանված է); 3) հրաժարվում է գնանշումների հարցման անցկացումից; 4) մասնակցի կողմից գնանշման հայտի դրույթների վերաբերյալ պարզաբանումներ չներկայացնելը (պատվիրատուի պահանջի առկայության դեպքում):
11.	Առաջարկությունների հարցման մասնակիցներին ներկայացվող պահանջներ և փաստաթղթերի ցանկ, որոնք պետք է ներկայացվեն իրենց համապատասխանությունը հավաստելու համար սահմանված պահանջներին	1.Մասնակցի մոտ հարկերով, գանձումներով, տույժերով, հարկային սանկցիաներով ապառքների, ինչպես նաև բյուջետային համակարգի բոլոր մակարդակների բյուջեներում այլ պարտադիր վճարների և պետական արտաբյուջետային հիմնադրամներ պարտադիր վճարների (բացառությամբ այն գումարների, որոնց մասով տրամադրվել են տարկետումներ, տարաժամկետումներ, ներդրումային հարկային վարկ հարկերի և գանձումների մասին օրենսդրությանը համապատասխան, որոնք վերակառուցվել են օրենսդրությանը համապատասխան, որոնցով առկա է օրինական ուժի մեջ մտած դատարանի վճիռ այդ գումարների վճարման գծով հայտարարտուի պարտականությունը կատարված ճանաչելու մասին կամ որոնք ճանաչվել են որպես անհուսալի հարկերի և գանձումների մասին օրենսդրությանը համապատասխան գանձելու համար) գծով ժամկետանց պարտավորությունների բացակայությունը: Մասնակիցը համարվում է համապատասխանող սահմանված պահանջին այն դեպքում, եթե նրա կողմից սահմանված կարգով դիմում է տրվել նշված ապառքի, ժամկետանց պարտքի բողոքարկման մասին և այդ դիմումով որոշում մասնակցության հայտի քննարկման ամսաթվի դրությամբ մատակարարի (կապալառուի, կատարողի) որոշման մեջ չի ընդունվել, 2.Մասնակցի՝ իրավաբանական անձի լուծարում չիրականացնելը և մասնակցին՝ իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը անվճարունակ (սնանկ) ճանաչելու և մրցութային

		վարույթ բացելու մասին դատարանի որոշման բացակայությունը: 3) Փաստաթուղթ, որը հավաստում է տվյալ տեսակի աշխատանքների իրականացման իրավունքի առկայությունը: 4) Կատարողական պայմանագրերի պատճենները, կատարված աշխատանքների ակտերի և նախագծահետախուզական աշխատանքների կատարումը հաստատող այլ փաստաթղթերի պատճենները՝ վերջին 3 (երեք) տարվա ընթացքում կատարված նախագծերով պայմանագրի սկզբնական (առավելագույն) գնի առնվազն 50%-ի չափով:
12.	Ապրանքի, աշխատանքի, ծառայության վճարման ձևը, ժամկետները և կարգը	Վճարումը կատարվում է անկանխիկ եղանակով՝ փոխանցելով դրամական միջոցները կոնտրագենտի հաշվին: Գնանշումների հարցման պայմանների համաձայն կանխավճար նախատեսված չէ: Կատարված աշխատանքների դիմաց վճարումն իրականացվում է հանձման-ընդունման ակտը պատվիրատուի կողմից ստորագրվելուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացում:
13.	Պայմանագրի կնքման ժամկետը	Գնման գործընթացի արդյունքներով կազմված մրցութային հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության ստորագրման օրվանից հաջորդող 10 օրվանից ոչ շուտ և 20 օր ոչ ուշ: